ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հոկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

135
(2985)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒՄ «ՄԻՔՈՅՈՎ» Է ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

PROMO PR

Երեւանի քաղաքապետարանը 13 մլն 740 հազար դրամ է նախատեսել ուսուցչի տոնին մանկավարժներին պարգեւատրելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկացավ պաշտոնական աղբյուրներից:

Հայաստանում ուսուցչի տոնը նշվում է հոկտեմբերի 5-ին՝ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած ուսուցիչների համաշխարհային օրվա հետ:

«Պրոմո Պիար» ՍՊԸ-ն, որը ստանձնել է միջոցառման մատակարարի դերը, համաձայն գնման պայմանագրի՝ «մանկավարժներին արժեւորելու նպատակով նախատեսված հանդիսավոր միջոցառման շրջանակում ապահովելու է հանրակրթության պետական չափորոշչի ներդրման լավագույն փորձի խրախուսմանն ուղղված նախաձեռնության շրջանակում մասնակցած եւ Երեւանի քաղաքապետարանի կողմից ընտրված մանկավարժների (ուսուցիչներ, տնօրեններ, տնօրենների տեղակալներ, խմբակավարներ) պարգեւատրում»:

Ըստ պայմանագրի՝ նախատեսված է. «Միջոցառման ընթացքում Երեւանի քաղաքապետարանի ճեմասրահում ընդհանուր առմամբ 80 անձի համար ապահովել՝

աթոռներ

ֆուրշետ ծառայություն

կանապեներ՝մսային, աղցանային, բեկոնով, պանրով, հավով եւ բանջարեղենով

թխվածքի տեսականի՝կրեմային եւ ոչ կրեմային, բնական հյութեր, հանքային ջուր, աղբյուրի ջուր, լայմով եւ անանուխով զովացուցիչ ըմպելիք, գինի, միրգ, սուրճ, կոկտեյլի 6 սեղաններ՝ ձգվող սփռոցով, սառույցի ամաններ, աղբի համար նախատեսված տարաներ, 4 մատուցող, երկու հավաքարար»:

Միջոցառումն ուղեկցվելու է դասական երաժշտության ստեղծագործությունների կատարմամբ եւ տեւելու է առնվազն 2 ժամ:

Մատակարարը պետք է ապահովի. «70 փունջ ծաղիկ, յուրաքանչյուր փնջում՝ 11 վարդ ծաղիկներ. բացառապես թարմ, բնական վարդեր, տեսակը՝հոլանդական կամ համարժեք, ծաղկի գլուխը (կոկոնը)՝առնվազն 7 սմ տրամագծով, բարձրությունը՝առնվազն 7 սմ, ցողունի երկարությունը՝առնվազն 70 սմ, դեկորացիայի համար նախատեսված ժապավենով փնջավորված: Փնջերում ծաղիկների գույնը եւ փաթեթավորման ձեւը նախապես համաձայնեցնել հանրակրթության վարչության հետ»:

«Պրոմո Պիար» ՍՊԸ-ի դեմ, որը հանդիսանում է միջոցառման կազմակերպիչը եւ անհրաժեշտ ծառայության մատակարարը, կիրառվել են սահմանափակումներ՝համաձայն ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի:

Տեղեկացնենք, որ ընկերության 100% բաժնետերը Արա Սիմոնյանն է, որի նկատմամբ ՀՀ ՊԵԿ-ը կիրառել է վարչական տույժ, քանի որ «ՀՀ եւ եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ անուղղակի հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով՝սահմանված ժամկետում չի ներկայացրել 02.09.2019-ին եւ 08.09.2019-ին կատարած ներմուծումների վերաբերյալ ներմուծման հարկային հայտարարագրերը եւ հայտարարությունները, ինչի հիման վրա վարչական պատասխանատվության է ենթարկվել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Ամենայուղալի դատական գործերը մակագրվել են ՔՊ-ական նախկին պատգամավորի թեկնածուին, որը հակակոռուպցիոն դատարանի դատավոր է: Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի եւ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի գործը մակագրվել է դատավոր Սարգիս Ռաֆիկի Պետրոսյանին: Պետրոսյանը 2018 թվականի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ եղել է «Իմ քայլը» խմբակցության պատգամավորի թեկնածու Շիրակի մարզից. այսինքն՝ ՔՊ-ական է եղել: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է դատավորի ունեցվածքը եւ նկատել, որ 2011 թվականին ժառանգությամբ Պետրոսյանին է փոխանցվել 3 անշարժ գույք՝2 հողամաս եւ 1 Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված շինություն Շիրակի մարզի Արթիկ համայնքում: Եվս մեկ հողամաս նույն տարում դատավորը գնել է: 2019 թվականին դատավոր Պետրոսյանը ձեռք է բերել 2010 թվականի արտադրության MITSUBISHI մակնիշի մեքենա: 2023 թվականի հաշվետու տարվա վերջին դատավորի կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 հազար դոլար, 17 մլն դրամ եւ 1,5 մլն դրամ: Դատավորի՝2023 թվականի հաշվետու տարվա եկամուտը ՀՀ դատախազությունից կազմել է 9 մլն 239 հազար դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը եւ Հերիքնազ Տիգրանյանը հրաժարվել են տեղափոխվել գործադիր եւ արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնել: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ՔՊ-ում արդարադատության նախարարի պաշտոնում Գրիգոր Մինասյանին փոխարինող տարբեր թեկնածուներ են քննարկվում: ՔՊ-ում հակված են այդ պաշտոնում նշանակելու իշխանական պատգամավորի, եւ կուսակցության վարչության նիստին շրջանառվել են Արփի Դավոյանի, Վլադիմիր Վարդանյանի, Արուսյակ Ջուլհակյանի եւ Հերիքնազ Տիգրանյանի անունները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հերիքնազ Տիգրանյանը եւ Վլադիմիր Վարդանյանն ի սկզբանե իրենց թիմակիցներին հայտնել են, որ չեն ցանկանում տեղափոխվել գործադիր եւ աշխատել արդարադատության նախարարի պաշտոնում, ուստի թիմակիցներին խնդրել են այլեւս չդիտարկել իրենց թեկնածությունները: Եվ ահա, ՔՊ-ում նախարարի թեկնածուների թիվը սեղմվել է, հիմնական քննարկումը Արփի Դավոյանի եւ Արուսյակ Ջուլհակյանի շուրջ է տեղի ունենում. հավանական է Ջուլհակյանի նշանակումը: ArmLur.am-ի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը հայտնեց, որ ԱԺ-ից տեղափոխվելու ծրագիր չունի, իր աշխատանքը շարունակելու է օրենսդիրում: Հերիքնազ Տիգրանյանը եւս հայտնել էր, որ իր թեկնածությունն առաջադրվել էր արդարադատության նախարարի պաշտոնում, բայց ինքը հրաժարվել է: Հիշեցնենք, որ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի հեռանալուց հետո եւս ՔՊ-ում իրարանցում էր, խմբակցության պատգամավորները չէին ցանկանում գնալ գործադիր եւ աշխատել այնտեղ: Վերջում Գեւորգ Պապոյանն ինքն էլ մասնավոր զրույցներում խոստովանում էր, որ ստիպված է ընդունել էկոնոմիկայի նախարարի պաշտոնում նշանակվելու առաջարկը:



2020 թվականին՝ «Քովիդի» շրջանում, ենթադրյալ չարաշահումների գործով հակակոռուպցիոն դատարանում սկսվել է վկաների հարցաքննության փուլը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝հակակոռուպցիոն դատարան հարցաքննության կիրավիրվի առողջապահության նախկին նախարար, ներկայումս ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանը, ով այս չարաշահումների գործով վկայի կարգավիճակով մեկ անգամ արդեն հարցաքննվել է: Կորոնավիրուսի շրջանի ենթադրյալ չարաշահումների գործով անցնողներն են առողջապահության նախկին փոխնախարար Գեւորգ Սիմոնյանը եւ այլ անձինք: Ըստ հակակոռուպցիոն կոմիտեի՝Գեւորգ Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քավոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրենի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւանքով Բաբկեն Շահումյանը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ: Ըստ իրավապահների՝պատասխանատուները բուժվողների վերաբերյալ «Մեդլայն կլինիկի» տրամադրած կեղծ տվյալները չեն համադրել բուժառուների փաստացի առողջական վիճակի հետ ու չեն արձանագրել անհամապատասխանությունները: 2020-2022 թվականներին առողջապահության փոխնախարարի պաշտոնը զբաղեցրած Գեւորգ Սիմոնյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը:

ԶՐՈՒՅՑ

«ՀԵՐԹԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆ Է ՍԱ». ԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին փոխնախագահ Արա Սահակյանի հետ:



-Պարոն Սահակյան, մինչ ընդդիմադիր գործիչները մեղադրում են Նիկոլ Փաշինյանին, որ իր իշխանության օրոք հանձնվեց Արցախը եւ մեր ինքնիշխան տարածքներից հողեր, նա ԱԺ ամբիոնից հայտարարում է, որ մեր ինքնիշխան տարածքներից որեւէ միլիմետր չի հանձնվել, եւ այն տարածքները, որոնք տրվել են, մեզ չեն պատկանել:

-Այսինքն՝ քարտեզները կան, հա՛, իր մտքում սահմանազատումն ու սահմանագծումը կատարված է, որը միայն ինքը գիտի, ՔՊ-ն եւ ուրիշ ոչ ոք: Սա նորություն է: Դա նշանակում է, որ մենք նոր հայտնության առջեւ ենք, որ Հայաստանն ունի սահմանազատված եւ սահմանագծված տարածքներ, դրանց վերաբերյալ քարտեզներ, եւ դրանք ՔՊ-ի դարակներում, փաստորեն, գաղտնի են պահվում, ու մենք չգիտենք եւ պետք է հավատանք իր խոսքին...: Ինքը ոչինչ չի արել, որ իր խոսքին հավատանք, սա հերթական կեղծիքն է:

Իր խոսքն ամբողջությամբ քարոզչություն է, միտված չէ հասարակությանը կամ լրատվամիջոցներին նորություններ հաղորդելուն, այն ամբողջությամբ եւ միմիայն քարոզչություն է:

-Պարոն Սահակյան, գիտենք, որ հայկական կողմը ադրբեջանական կողմին առաջարկել է մինչեւ նոյեմբեր ստորագրել Խաղաղության պայմանագիրը: Ի՞նչ սպասումներ ունեք: Ադրբեջանական կողմը, փոխարենը, ոչ մի ցանկություն չի հայտնել եւ միայն նորանոր պահանջներ է ներկայացնում:

-Դե եթե կողմերից մեկը այնքան էլ ոգեւորված չէ այդ ծրագրով, ապա այն չի կատարվի: Գուցե արտաքին ճնշում կլինի, բայց արդյոք Հայաստանն այսօր այն արժեքն ունի՞ Արեւմուտքի համար, որ ճնշում գործադրեն. դրա համար հիմքեր չեմ տեսնում: Հակառակը, պետք է վերագնահատել ամեն բան, հատկապես Իրանի՝ Իսրայելին ուղղված ռմբակոծումներից եւ «Հըզբոլլահ»-ի շուրջ ստեղծված իրավիճակից հետո:

-Այդ ամենն ինչպե՞ս կարող է անդրադառնալ մեզ վրա:

-Ամենաանմիջական ձեւով՝ սկսած նրանից, որ անմիջական հարեւանությամբ է Իրանը, աշխարհի մաշստաբով՝ այն կողքի բակն է, եւ ամեն բան «կողքի բակում» է կատարվում, ու, վերջացած նրանով, որ Իրանը մեր հարեւանն է, եւ ունենք սահման:

Հայաստանում կատարվող իրադարձությունները նրանց համար նույնքան նշանակալի են, որքան այնտեղ կատարվող իրադարձությունները՝ մեզ համար: Ընդ որում, դա պարզ ներքաղաքական կամ աննշան տարաձայնություն չէ, դա մեծ եւ արյունալի առճակատում է: Այլ հարց է, թե ովքեր այդ առճակատումը կանգնեցնելու հանձնառությունը կվերցնեն իրենց ուսերին: Դա կարող է լինել Ռուսաստանի Դաշնությունը, Թուրքիան, եթե մինչեւ վերջ անկեղծ է, եւ ԱՄՆ-ն, եթե սպառնալիքը մեծանա Իսրայելի համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՉԱՅԻՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 226

2018 թվականի նոյեմբերի 30-ին Հրազդան քաղաքի հրապարակում բնակիչների հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ոստիկանության զորքերը ոչ թե քաղաքացիներին են ջարդուփշուր անում, այլ մասնակցում են սահմանների պաշտպանությանը»: Իրականում, սկզբնական փուլում իրոք ոստիկանները 15-օրյա հերթափոխով մեկնում էին սահմանային դիրքեր: Սակայն դա տեւեց ընդամենը մի քանի ամիս: Երբ Նիկոլ Փաշինյանի կառավարումից դժգոհությունները մեծանացան, ոստիկանների ուժը արդեն սկսեցին օգտագործել երկրի ներսում՝ քաղաքացիներին բառի բուն իմաստով ջարդուփշուր անելու համար: Խոստման կեղծ լինելու առաջին աղմկոտ դեպքը գրանցվեց 2019 թվականին Իջեւանում, երբ Փաշինյանի մի խումբ համագյուղացիներ որոշել էին ծառահատում անել: Արդյունքում բախումներ եւ ծեծկռտուք էր սկսվել ոստիկանների եւ քաղաքացիների միջեւ: Հոսպիտալացվել էին տուժած քաղաքացիներ:

Հետագայում, տարբեր բողոքի ակցիաների եւ հանրահավաքների ժամանակ, հանրությունը ականատես եղավ ոստիկանների, «տարատեսակ» սեւ եւ կարմիր բերետավորների կողմից բռնության աննախադեպ դեպքերի: Ուղեղի ցնցում, մարմնական վնասվածքներ, տարբեր մարմնամասերի կոտրվածքներ, անգամ պատգամավորի քթի կոտրվածք, բերետավորների կողմից վայրի կերպով խմբակային ծեծ՝ ավտոմեքենայի մեջ: Շարքը կարելի է շարունակել՝ նշելով, թե ինչ վնասվածքներ են հասցրել ոստիկանները իրենց «օրինաչափ» գործողություններով:

Այս ընթացքում, սակայն, ոստիկանները հասցրել էին այլ աննախադեպ բան էլ անել՝ ծեծել փաստաբանների:

ԻՆՉ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՎԵԼ ՔՊ-ՈՒՄ

ՔՊ-ում այս օրերին թեժ քննարկվում է, թե ով պետք է փոխարինի Գրիգոր Մինասյանին արդարադատության նախարարի պաշտոնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում հակված են իշխանական պատգամավորի նշանակել այդ կարեւոր պաշտոնին, իսկ կուսակցության ներսում քննարկումներն ընթացել են 3 թեկնածուների շուրջ՝ Արփի Դավոյան, Վլադիմիր Վարդանյան եւ Արուսյակ Ջուլհակյան:

Արփի Դավոյանի լոբբինգով ՔՊ-ում զբաղվում է Անդրանիկ Քոչարյանը, որը շատ մտերիմ հարաբերություններ ունի Դավոյանի հետ եւ հույսեր է փայփայում, որ նրա նշանակման դեպքում կարող է շատ անձնական հարցեր լուծել:

Ի դեպ, Արփի Դավոյան-Անդրանիկ Քոչարյան զույգը նաեւ Գրիգոր Մինասյանի դեմ արշավի գլխավոր դերակատարն է: Նախորդ շաբաթ կայացած ՔՊ վարչության նիստին Արփի Դավոյանի թեկնածությունն առաջադրել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանն առաջադրել է պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի թեկնածությունը՝ հիմնավորելով, որ վերջինս իրավաբանական կրթություն ունի, իսկ ՔՊ կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանն էլ առաջադրել է Արուսյակ Ջուլհակյանի թեկնածությունը:

ՔՊ վարչության նիստին, սակայն, ներկաների մեծ մասը կողմ է արտահայտվել Արփի Դավոյանի թեկնածությանը. ուստի մյուսներն այլեւս հանել են իրենց առաջադրած թեկնածուներին:

Իսկ թե որքանով Արփի Դավոյանը կապ ունի իրավաբանության եւ արդարադատության հետ, կարող ենք նրա կենսագրությունից դատել:

Վերջինս առհասարակ իրավաբանի կրթություն չունի, մասնագիտությամբ մանկավարժ-հոգեբան է, ժամանակին աշխատել է որպես ԱԺ «Ելք» խմբակցության գործավար, այնուհետեւ վարչապետի օգնական:

Ի դեպ, վերջինս նաեւ հասարակական-քաղաքական գործիչ, Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարյանի համակուրսեցին է: Կարող ենք եւս մեկ անգամ փաստել, որ գործող իշխանությունների համար առհասարակ կապ չունի անձի մասնագիտական հմտությունները, կամ թե որքանով է նա համապատասխանում տվյալ պաշտոնին, բացառապես կարեւոր է այն, որ լինի ՔՊ կուսակցության անդամ: Իսկ թե ով կլինի արդարադատության նախարարը՝ պարզ կդառնա հաջորդ շաբաթ՝ ՔՊ վարչության նիստից հետո:

Նյութերը՝ Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ԹԵԺ ԶՐՈՒՅՑ՝ Հ1-Ի ԵԹԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին Հանրապետության հրապարակում հանրահավաքից հետո Սրբազան շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը աջակիցների հետ գնաց Հանրային հեռուստաընկերություն:

Հ1-ի ղեկավարության հետ բանակցություններից հետո Բագրատ Սրբազանը նախ ուղիղ եթերում ուղերձով հանդես եկավ, այնուհետեւ պատասխանեց Պետրոս Ղազարյանի հարցերին:

Պետրոս Ղազարյանը փորձեց նախ ճշտել Բագրատ Սրբազանի տեսակետը նոյեմբերի 9-ի փաստաթղթի 9-րդ կետի վերաբերյալ, ապա մեղադրեց Սրբազանին, որ աղճատել է Փաշինյանի ասածները, օրինակ, այն մասին, որ Արցախը թոկ է եղել Հայաստանի վզին:

Բագրատ Սրբազանը նաեւ պատասխանեց Պետրոս Ղազարյանի հարցին՝ ինչո՞ւ չէր խոսում այն ժամանակ, երբ նախկին իշխանությունների օրոք բանակը թալանում էին եւ ընտրակեղծարարությունների դիմում:

Բագրատ Սրբազանն էլ ասաց, թե հիմա կոռուպցիան ավելի է աճել եւ անուններ նշեց, օրինակ՝ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյան, երբ Ազատ գյուղում կացարանի այրվելուց հետո նոր բնակարան էր ձեռք բերել:

Պետրոս Ղազարյանի հարցին՝ ինչու է հանդիպել Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի հետ, Բագրատ Սրբազանն ասաց, որ դա որեւէ մեկի գործը չէ՝ ինչ է քննարկել նախկին նախագահների հետ:

Հարցազրույցի վերջում արդեն Բագրատ Սրբազանը հայտարարեց, որ կիրակի օրը Հանրապետության հրապարակում հերթական հավաքն է տեղի ունենալու:

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ ԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպես նշել էինք՝ ՔՊ-ում այս օրերին թեժ քննարկվում է, թե ով պետք է արդարադատության նախարարի պաշտոնում փոխարինի Գրիգոր Մինասյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում հակված են իշխանական պատգամավորի նշանակել այդ կարեւոր պաշտոնին, իսկ կուսակցության ներսում քննարկումներն ընթացել են 3 թեկնածուների շուրջ՝ Արփի Դավոյան, Վլադիմիր Վարդանյան եւ Արուսյակ Ջուլհակյան:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց, որ ինքը գործադիր տեղափոխվելու մտադրություն չունի:

«Ես Ազգային ժողովից տեղափոխվելու որեւէ ծրագիր չունեմ, շարունակում եմ այստեղ իմ աշխատանքը եւ չգիտեմ՝ այդ մեկնաբանությունները որտեղից են գալիս: Այսքանը, այլ մեկնաբանություն չունեմ»:

Հիշեցնենք, որ ՔՊ վարչության նիստին Վլադիմիր Վարդանյանի թեկնածությունը առաջադրել էր ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու առաջարկած «հաղթանակի պլանը» ներառում է երրորդ երկրների մասնակցությունը: Այս մասին հայտարարել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Մեթյու Միլլերը:

«Հաղթանակի ծրագիրը, որը ներկայացրել է Ուկրաինան, կապված չէ միայն այն բանի հետ, թե ինչ կանի Ուկրաինան, այլ այն, թե ինչ կանեն աշխարհի մյուս երկրները»,- ճեպազրույցի ժամանակ ասել է Միլլերը:

Սակայն նա հրաժարվել է հրապարակել ծրագրի մանրամասները, քանի որ «Ուկրաինան դեռ չի հրապարակել իր մանրամասները»:

«Մենք վերանայեցինք այս ծրագիրը եւ տեսանք մի շարք արդյունավետ քայլեր դրանում», - ավելացրել է Պետդեպարտամենտի ներկայացուցիչը:

Սեպտեմբերի 26-ին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին Վաշինգտոնում հանդիպեց ամերիկացի առաջնորդ Ջո Բայդենի հետ՝ նախապես հայտարարելով, որ մտադիր է նրա հետ քննարկել հակամարտությունը դադարեցնելու որոշակի ծրագիր՝ «հաղթական ծրագիր», քանի որ այն պարունակում է կետեր, որոնք կախված են Վաշինգտոնի որոշումից: Միաժամանակ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը սահմանափակվել է միայն հայտարարելով, որ ԱՄՆ-ն կուսումնասիրի Կիեւի առաջարկած ծրագիրը:

ՀԱՆԵԼ Է ԹՌԻՉՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Իրանի իշխանությունները չեղարկել են թռիչքների բոլոր սահմանափակումները, որոնք սահմանվել էին հոկտեմբերի 1-ին Իսրայելի վրա զանգվածային հրթիռային հարձակումից հետո: Այս մասին հայտարարել է Իսլամական Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ներկայացուցիչ Ջաֆար Յազարլոուն:

«Անվտանգ թռիչքների համար բոլոր պայմաններն ապահովելուց հետո՝ բոլոր սահմանափակումները հանվել են, եւ ավիաընկերություններին թույլատրվել է թռիչքներ իրականացնել առավոտյան ժամը 5:00-ից», Ն- Յազերլոուի խոսքերն է մեջբերում IRNA գործակալությունը:

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

Հունգարիան արգելափակում է ԵՄ-ի պլանը՝ հրահանգիչների եւ խորհրդականների ուղարկելու Ուկրաինա՝ այնտեղ ուկրաինացի զինվորականներին նախապատրաստելու համար: Բուդապեշտը պահանջում է, որ ծրագիրը լրամշակվի: Այս մասին հայտարարել է Հունգարիայի արտաքին գործերի եւ արտաքին տնտեսական կապերի նախարար Պետեր Սիյարտոն: Նրա խոսքով՝ ԵՄ երկրների տարածքում վերապատրաստման առաքելությունը, որն սկսվել է 2022 թ. նոյեմբերին, շուտով կավարտվի. ներկայում ԵՄ-ում քննարկվում է ոչ միայն այն երկու տարով երկարացնելու, այլեւ հրահանգիչներին եւ ռազմական խորհրդականներին Ուկրաինայի տարածք ուղարկելու առաջարկը, «որպեսզի նրանք մասնակցեն նախապատրաստական առաքելության համակարգմանը եւ, ինչպես նրանք են ասում, դրա արդյունավետության բարձրացմանը»:

ՄՏԱՀՈԳԻՉ

«ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ ԱՆԸՆԴՀԱՏ ՀԵՏԱՁԳՈՒՄ ԵՆ»

Ֆրանսիական հեղինակավոր Le Point պարբերականը «Աշխարհն աչք է փակել Լեռնային Ղարաբաղում իրականացված էթնիկ զտումների վրա» խորագրով հարցազրույց է հրապարակել Ռուբեն Վարդանյանի որդու՝ Դավիթ Վարդանյանի հետ: Ստորեւ որոշ կրճատումներով ներկայացվում են Le Point-ի նախաբանը եւ հարցազրույցը.

«Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչների համար այս օրերին տխուր տարելից է: Մեկ տարի առաջ Ադրբեջանն իր տիրապետության տակ առավ հայկական անկլավը եւ նրա մայրաքաղաք Ստեփանակերտը՝ մոտ 120.000 մարդու պարտադրելով աքսորի: Մի քանի հայ քաղաքական առաջնորդներ, այդ թվում՝ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ձերբակալվել են ադրբեջանական զինված ուժերի կողմից: Ձերբակալվելով 2023 թվականի սեպտեմբերի 27-ին Լաչինի միջանցքում, որը նախկինում ծառայել է որպես միակ անցակետը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ, Ռուբեն Վարդանյանն արդեն մեկ տարի է, ինչ կալանավորված է Ադրբեջանում, որտեղ նա սպասում է ենթադրյալ դատավարությանը, որն անընդհատ հետաձգվում է: Նրա որդին՝ Դավիթ Վարդանյանը, տագնապի ազդանշան է հնչեցնում եւ խնդրում է միջազգային հանրությանը ճնշում գործադրել Ադրբեջանի վրա, որպեսզի վերջինս ազատ արձակի հայ բանտարկյալներին:

-Ձեր հոր մասին նոր տեղեկություններ ունե՞ք:

-Հայրս ձերբակալվել է 2023 թվականի սեպտեմբերի 27-ին եւս յոթ հոգու հետ: Լուրն իմացանք սոցիալական ցանցերից: Դա շոկ էր: Մենք չենք կարող գնալ նրան տեսակցելու, բայց երբեմն խոսում ենք նրա հետ հեռախոսով եւ հաղորդագրություններ ենք ստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով: Վերջին անգամ ես խոսել եմ նրա հետ նախորդ շաբաթ:

-Նրա առողջական վիճակն ինչպե՞ս է:

-Ապրիլի սկզբին հայրս հացադուլ էր սկսել: Նրա որոշման մասին մենք իմացանք միայն երկու շաբաթ անց, քանի որ նա այդ ժամանակ գտնվում էր մեկուսարանում՝ առանց արտաքին աշխարհի, այդ թվում՝ այնտեղ գտնվող իր փաստաբանի հետ հաղորդակցվելու հնարավորության: Մեր միջազգային փաստաբաններին չի թույլատրվում այցելել նրան: Հորս հատուկ խցում են տեղավորել. նրան 48 ժամ թույլ չեն տվել ջուր խմել եւ ստիպել են ժամեր շարունակ մնալ ոտքի վրա, ինչը միջազգային կոնվենցիաների համաձայն՝ խոշտանգման դրսեւորում է համարվում: Ահա թե ինչու մենք խնդիրը ներկայացրինք ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի ուշադրությանը: Միջազգային ճնշման ներքո Ադրբեջանի իշխանությունները վերջապես համաձայնեցին նրան հնարավորություն տալ՝ հարազատներին զանգահարելու: Մայրս կարողացել էր հեռախոսով խոսել նրա հետ եւ համոզել, որ դադարեցնի հացադուլը:

-Ե՞րբ է նախատեսվում նրա դատավարությունը:

-Սա մեզ համար ամենամտահոգիչ հարցերից մեկն է: Դատավարությունը պետք է կայանար 2024 թվականի հունվարին: Այն նախ կամայականորեն հետաձգվեց մինչեւ մայիս, հետո եւս մեկ անգամ հետաձգվեց: Այժմ նախատեսվում է, որ այն պետք է անցկացվի հոկտեմբերին, բայց մենք որեւէ երաշխիք չունենք, որ այն կրկին չի հետաձգվի: Սովորաբար արգելվում է անձին ամիսներ շարունակ պահել կալանքի տակ՝ առանց հստակ մեղադրանքի: Բայց, ցավոք, մենք գիտենք այն երկրի գործելաոճը, որտեղ բանտարկված է իմ հայրը...

Հայերն ու ադրբեջանցիները պետք է սովորեն համագոյակցել, որովհետեւ մենք հարեւաններ ենք եւ հարեւաններ ենք մնալու: Բայց դա չի կարելի իրականացնել ուժի կիրառմամբ ու սպառնալիքով:

-COP29-ը՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը, պետք է անցկացվի նոյեմբերին Ադրբեջանում: Ի՞նչ ուղերձ կցանկանայիք հղել օտարերկրյա առաջնորդներին, ովքեր կայցելեն Բաքու:

-Ինչպե՞ս կարելի է COP-ը վստահել նավթային պետությանը, որի արտահանման եկամուտների 90%-ը ստացվում է նավթից, որի քաղաքականությունը հիմնված է որքան հնարավոր է՝ ավելի շատ գազ եւ նավթ արդյունահանելու վրա, եւ որը, միեւնույն ժամանակ, ամբողջությամբ ոտնահարում է մարդու իրավունքները: Իմ կարծիքով, մենք չենք կարող տարանջատել կլիմայական արդարությունն ու մարդու իրավունքները: Այդ երկուսը փոխկապակցված են: Եթե մենք ցանկանում ենք լուրջ վերաբերմունքի արժանանալ զարգացող երկրների կողմից, որոնք իրենց ուշադրության կենտրոնում են պահում COP-ի նման կոնֆերանսները, որպեսզի տեսնեն, թե ինչ կարելի է անել, մենք պետք է պահանջենք հյուրընկալող երկրներից, որ վերջիններս մանրամասն ներկայացնեն իրավիճակը: Հուսով եմ, որ մյուսները կհետեւեն Փարիզի քաղաքապետ տիկին Իդալգոյի օրինակին, որը հրապարակավ ասաց, որ ինքը չի գնա COP՝ Ադրբեջանի վարքագծի պատճառով: Այս պահից սկսած մինչեւ նոյեմբեր մենք հնարավորություն ունենք ճնշում գործադրելու Բաքվի վրա:

-Արդյո՞ք միջազգային հանրությունը չափազանց ներողամիտ է Ադրբեջանի նկատմամբ:

-Ադրբեջանն աշխարհում ազատության ամենացածր ցուցանիշն ունեցող երկրներից մեկն է: Ըստ Freedom House-ի՝ նրա ազատության ինդեքսը 100 հնարավորից 7-ն է: Մեծ տերություններից Ֆրանսիան միակն էր, որ պատասխանատվության կանչեց Բաքվի ռեժիմին: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Միացյալ Թագավորությունը եւ Գերմանիան, ազդեցություն ունեն տարածաշրջանի վրա: Նրանք պետք է անեն շատ ավելին, քան արել են նախկինում»:

ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

«ՖԼԵԾ»-Ի ԲԱՐՍԵՂԸ ԱԺ-ԻՆ ԲԵՆԶԻՆ Է ՏԱԼՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքական իշխանությունների թեթեւ ձեռքով՝ իրավապահների դուռը ընկած Բարսեղ Բեգլարյանին պատկանող ընկերությունից ԱԺ-ն բենզին կգնի:

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 3-ի նիստում որոշում կայացրեց, որով առաջարկվում է 2024-ի բյուջեով ԱԺ ընդհանուր հատկացումների հաշվին իրականացնել վերաբաշխում:

Նախատեսվում է 27,4 մլն դրամ հատկացնել բենզին (16,9 մլն դրամի) եւ ձեռքի թղթե սրբիչներ (10,5 մլն դրամի) գնելու համար:

Նշվում է, որ ռեգուլյար տեսակի բենզինի գնման պայմանագիրը կնքվել է «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի հետ, որի հիմնադիրը Բարսեղ Բեգլարյանն է:

Նշենք, որ նրան մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ պետությունից վատնելու եղանակով առանձնապես խոշոր չափերով գումարի հափշտակության կատարմանը դրդելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐ ԴԱՏԱՎՈՐԸ ԿՔՆՆԻ

36 ԿԳ ՈՍԿՈՒ, 293 ՄԼՆ ՌԴ ՌՈՒԲԼՈՒ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՎ

Ինչպես հայտնի է՝ 36 կգ ոսկու, 293 միլիոն ՌԴ ռուբլու անհետացման գործով նախաքննության ավարտ է հայտարարվել 7 մեղադրյալների մասով, եւ աղմկահարույց գործը ուղարկվում է դատարան:

Սակայն ուշագրավն այն է, որ աղմկահարույց դեպքից անցել է գրեթե 6 ամիս, բայց հիմնական դերակատարները չկան, իսկ կալանավորվածը՝ մեկ կարեւոր խմբի մասնակիցը, ցուցմունք չի տալիս, գողոնի մեծ մասն էլ չկա ու չկա:

Եվ մինչ իրավապահները 6 ամիս է նրանց են փնտրում ու գործը դատարան ուղարկում, ենթադրյալ հանցագործները վայելում են ձեռք բերածը:

Այս գործը քննելու է դատավոր Ջոն Հայրապետյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս գործով իրավապահների տեսադաշտում է հայտնվել մի դատավոր՝ Արշակ Պետրոսյանը:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից, զենքի գործադրման սպառնալիքով, կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո՝ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառումով բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից:

Այնուհետեւ, երեք անձանց ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, դիմել են փախուստի:

Քրեական վարույթի շրջանակում քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 12 անձի նկատմամբ, որոնցից 5-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 3-ի նկատմամբ՝ այլ խափանման միջոցներ, 4 անձի ձերբակալելու որոշում է կայացվել եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն:

Ի դեպ, գրել էինք, որ քրեական վարույթով իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ «օրենքով գողի» փեսան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԿՈՒ ԱՆՁ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

ՏԱՄՆՅԱԿ ՓԱԹԵԹՆԵՐՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ

2024 թ. սեպտեմբերի 30-ին հաղորդում է ստացվել՝ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի 22 եւ 29-ամյա բնակիչների կողմից Գյումրի քաղաքում տեղադրման միջոցով թմրանյութ իրացնելու վերաբերյալ: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«Ստացված տեղեկություններն իրացնելիս վերջիններս նույն օրը հայտնաբերվել եւ, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, տեղափոխվել են ոստիկանության Կումայրիի բաժին:

Նշված անձինք իրավապահներին հայտնել են, որ թմրանյութերի վաճառքով զբաղվող կայքէջից ստանալով առաջարկ՝ գումարի դիմաց Վանաձոր քաղաքի մոտակայքից վերցրել եւ Գյումրի քաղաքի տարբեր հատվածներում, ինչպես նաեւ հարակից գյուղական բնակավայրերի դաշտամիջյան ճանապարհներին տեղադրել են փաթեթավորված մոտ 70 հատ 0,5 գրամից 10 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փաթեթներ եւ ապակյա տարաներով «Հաշիշի» յուղ, որոնց տեղադրման վայրերը լուսանկարել են իրենց բջջային հեռախոսներով՝ միաժամանակ նաեւ տեղեկացնելով, որ նշված տեսակի թմրամիջոցների որոշ խմբաքանակ առկա է նաեւ իրենց կողմից շահագործվող ավտոմեքենայում:

Փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, 44-396-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, վերոհիշյալ անձինք ձերբակալվել են:

Նախաքննության ընթացքում կասկածյալների մասնակցությամբ կատարվել են դեպքի վայրերի 7 զննություն, որի ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել են կպչուն ժապավեններով փաթեթավորված 55 փաթեթ, որոնք, ըստ զննության մասնակից-կասկածյալների հայտարարության, իրենց կողմից նշված տեղանքներում տեղադրված թմրամիջոցներն են: Նրանց կողմից շահագործվող MERCEDES-BENZ C 180 մակնիշի տրանսպորտային միջոցում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել եւ վերցվել են նախնական տվյալներով 3 սրվակ «Հաշիշի յուղ», փաթեթավորված թվով 7 փաթեթ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաեւ ատրճանակ:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի եզրակացության համաձայն՝ քննվող քրեական վարույթի շրջանակներում փորձաքննության ներկայացված փաթեթներից մեկում առկա զանգվածը «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց է:

Նախաքննության ընթացքում նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Վերջիններիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայում ներգրավված հնարավոր այլ անձանց, ինչպես նաեւ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

«ՏԵԼԵԳՐԱՄՈՎ» ԳՈՒՄԱՐԻ ՇՈՐԹՄԱՆ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԴԵՊՔ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վ. Աթոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, շանտաժի եղանակով շորթում կատարելու դիտավորությամբ, նախապես ներբեռնել է Ս. Հովհաննիսյանի «Տելեգրամ» բջջային հավելվածի անձնական օգտահաշվի լուսանկարը եւ այն համակարգչային ծրագրի միջոցով ձեւափոխել. Սյուզաննա Հովհաննիսյանին լուսանկարում դարձրել է մերկ:

Այնուհետեւ 2024 թվականի հունիսի 01-ին՝ ժամը 21:54-ի սահմաններում, «Տելեգրամ» հավելվածում իր անհատական օգտահաշվից հիշյալ ձեւափոխված լուսանկարն ուղարկել է Սյուզաննա Հովհաննիսյանին, հիշյալ լուսանկարը հրապարակելու սպառնալիքով պահանջ ներկայացրել առ այն, որ եթե Սյուզաննա Հովհաննիսյանը 250.000 ՀՀ դրամ չփոխանցի իր նշած էլեկտրոնային դրամապանակին, ապա ինքը հիշյալ լուսանկարը կհրապարակի նրա համածառայակիցների եւ համաքաղաքացիների շրջանում:

ՎԵՃԻՑ ՀԵՏՈ՝ ԱՆԽՆԱ ԿՐԱԿՈՑՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հոկտեմբերի 2-ի գիշերը՝ ժամը 02:00-ին, Կապան քաղաքի Շահումյան 39 Բ շենքում կրակոցի չդադարող ձայներ են լսվել:

Դեպքի վայր շտապած իրավապահները պարզել են, որ վերոնշյալ հասցեում ընտանեկան հարցերի շուրջ ընտանիքի անդամները վիճել են, եւ տան անդամներից մեկը իր անվամբ հաշվառված «ՄՌ-155» տիպի որսորդական ողորկափող հրացանից կրակոցներ է արձակել 2 անգամ բնակարանի առաստաղին եւ 4 անգամ՝ նույն շենքի բակում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բնակչին ձերբակալել են:

ԿԱՇԱՌՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՊՔԸ

ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողները հոկտեմբերի 1-ի՝ ժամը 16:00-ի սահմաններում, Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի 30-րդ կմ-ին, սահմանված արագությունը գերազանցելու համար, կանգնեցրել են «ԲՄՎ» մակնիշի մեքենան:

Երեւանի բնակիչ 54-ամյա վարորդը իրավախախտումը չարձանագրելու համար փաստաթղթի հետ պարեկներին է ներկայացրել 5000 դրամ:

Նա ձերբակալվել եւ տրանսպորտային միջոցով հանդերձ տեղափոխվել է ոստիկանության Չարենցավանի բաժին:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են հակակոռուպցիոն կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 2-ից 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 95 դեպք՝ որից 1-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՆԴԻԿՆԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՈՍԿԵՎԱՆՈՒՄ

Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղում թաղամասեր կան, որոնցում մինչեւ 15 առանձնատուն դատարկ է, դրանց տերերը վաղուց արտերկրում են, հիմնականում՝ Ռուսաստանում: Վերջերս Ոսկեվանում վարձով բնակություն է հաստատել 5 հնդիկ: Նրանք, որպես բանվոր, աշխատում են Տավուշի Ոսկեվան գյուղում կատարվող շինարարությունում:

ԻՆՉՈՒ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՉԿԱ

Իջեւան քաղաքի բնակիչները բողոքում են, որ այս տարի վառելափայտ չեն կարողանում ձեռք բերել: Ամեն աշուն Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի ընտանիքներին մինչեւ 8 խորանարդ մետր թափուկ վառելափայտ էր տրվում՝ անտառում ինքնապատրաստմամբ, սակայն այս տարի Իջեւան համայնքում այն չի տրվել, Նոյեմբերյան համայնքում էլ այն տրվել է սահմանափակ քանակով, միայն ընտանեկան նպաստառու ընտանիքներին: Խնդրի վերաբերյալ տեղեկատվական հարցում եմ ուղարկել «Հայանտառի» գլխավոր տնօրեն Սեւակ Մարկոսյանին, սակայն դեռ պատասխան չեմ ստացել: Հավելեմ, որ Տավուշի մարզում փայտի բիզնեսը գտնվում է Նիկոլ Փաշինյանի մտերիմների ձեռքում, ովքեր նախկինում դրա հետ կապված սկանդալային պատմությունների մեջ են հայտնվել:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՀԱԿԱՄԱՐՏԵԼ...

Սեպտեմբերի 10-ին «Դիլիջան» ազգային պարկի տնօրեն Ռոբերտ Ալիխանյանի բարեկամը, ով ազգային պարկի աշխատակից է, ինքնաշեն ատրճանակից կրակել է ազգային պարկի տնօրենի օգնական, Նիկոլ Փաշինյանի քեռու տղա Մամիկոն Հովհաննիսյանի ոտքերի տակ, որից հետո Մամիկոնը արձակուրդ է վերցրել: «Դիլիջան» ազգային պարկից տեղեկացա, որ իրավապահները դեպքի վերաբերյալ քննություն են սկսել, սակայն Մամիկոն Հովհաննիսյանը ժխտում է, որ իր վրա կրակել են: Ազգային պարկի աղբյուրները հայտնում են, որ ազգային պարկի տնօրեն, Դիլիջանի համայնքապետի տեղակալ Արման Բազինյանի ընկեր Ռոբերտ Ալիխանյանի եւ նրա օգնական, Մամիկոն Հովհաննիսյանի միջեւ հակամարտության պատճառն այն է, որ Մամիկոնը «Դիլիջան» ազգային պարկի տարածքում՝ բարձրավոլտ էլէկտրական հոսանքի հենասյուների տակ գտնվող տեղանքում, դեպի Գոշի սար ձգվող անտառում, անցյալ տարի եւ ընթացիկ տարում հատված մեծաթիվ ծառերի փայտը միայնակ է տնօրինել, Ռոբերտ Ալիխանյանին փայ չի տվել: Այդ հատումների հետեւանքով ստացված վառելափայտի տնօրինման, ստացված գումարների քանակի վերաբերյալ տեղեկատվական հարցում եմ ուղարկել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Տեր-Սիմոնյանին, սակայն դեռ պատասխան չեմ ստացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՌԻՍԿԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՉ ՎԱՐԱԿ Է ՏԱՐԱԾՎԱԾ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Վերջին շրջանում նկատելի է, որ տարածված է սեզոնային վարակ, եւ ինչն ավելի հուսահատեցնող է՝ երեխաների շրջանում:

Շատ ծնողներ «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգում են, որ դպրոցներում, մանկապարտեզներում, զարգացման կենտրոններում մեծ թվով վարակի դեպքեր են գրանցվել: Շատ երեխաներ ունեն ջերմություն, փորացավ, թուլություն: Չնայած նրան, որ երեխաները մեծ թիվ են կազմում, միեւնույնն է՝ մեծահասակների շրջանում նույնպես վարակման զգալի դեպքեր են գրանցվում: Նրանց դեպքում վարակի ախտանիշները գրեթե նույնն են:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց առողջապահության մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանի հետ հասկանալու համար՝ ինչ վարակ է սա եւ ինչով է պայմանավորված:

«Սուր շնչառական վարակների առկա ցուցանիշները դեռեւս անհանգստացնող չեն, սակայն հոկտեմբերի առաջին շաբաթից Հայաստանում սպասվում է ՍՇՎ հիվանդությունով պայմանավորված վարակվածության դեպքերի ակտիվություն:

Սեզոնային է, այսինքն՝ հոկտեմբերի մեկից մինչեւ մայիս ամիսը մենք ունենում ենք այդ վիրուսներով վարակվածության բարձր ցուցանիշ: Առհասարակ կարող ենք ասել, որ հիմա էլ ունենք աճ, բայց դա բնորոշ է սեզոնի այս ժամանակահատվածին: Այժմ գրանցված դեպքերի 76 տոկոսը արձանագրվել է 0-18 տարեկան երեխաների շրջանում: ՍՇՎ վարակի ախտանշաններից են ջերմության բարձրացումը, թուլությունը, հոդացավը, մկանացավը, հաճախ նաեւ դրսեւորվում է փորլուծությամբ: Հիմնական բարդությունը, որ կարող է առաջանալ, թոքաբորբն է:

Գրիպի դեմ ռիսկային խմբում են քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, 6 ամսականից 5 տարեկան երեխաները, 65 եւ բարձր տարիքի անձինք: Այս խմբում ներառված են նաեւ փակ հաստատություններում (երեխաների խնամքի եւ պաշտպանության հաստատություն, խնամքի տուն եւ այլն) գտնվող անձինք, բուժաշխատողներն ու հղիները: Նրանց խորհուրդ ենք տալիս պատվաստվել, ժամանակին դիմել բժշկի եւ չզբաղվել ինքնաբուժությամբ», - ասաց նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԿԱՐԳԱՎՈՐՎԵՆ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ազգային ֆիլմի հեռարձակման եւ կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաեւ դրանց ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացված եկամուտների մասին տեղեկությունները ֆիլմ ցուցադրողների կողմից կինեմատոգրաֆիայի ազգային մարմին ներկայացնելու կարգը:

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունն առաջին հերթին բխում է «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի կիրարկման, շահառուների իրավունքների եւ շահերի պաշտպանության, ինչպես նաեւ Հայաստանում կինոշուկայի կարգավորման անհրաժեշտությունից:

Համաձայն հիմնավորման՝ ՀՀ կինեմատոգրաֆիայի ոլորտում ներկայում կարգավորված չեն հայկական ֆիլմերի հեռուստատեսային եւ կինոթատրոնային ցուցադրումները, ինչը խոչընդոտում է կինոոլորտի տնտեսավարմանն ու եկամուտների գեներացմանը, ինչպես նաեւ թափանցիկության ապահովմանը՝ ոլորտի շահառու կազմակերպությունների եւ անձանց համար: Դա նաեւ խոչընդոտում է վարձույթի շուկայի համակարգմանը, որն էլ իր հերթին չեզոքացնում է հայկական ֆիլմերի կինովարձույթի արդյունքների հաշվառումը եւ ֆիլմերի վարկանիշների նշագրումը՝ միաժամանակ նպաստելով ֆիլմերի տարածման կամայական իրավակարգավորումներին: Բացի դրանից՝ ֆիլմարտադրությունը փոխկապակցված է շուկայի պահանջարկի հետ, սակայն ֆիլմերի ցուցադրությունների վերահսկման, եկամուտների, հանդիսատեսի քանակի, վաճառված տոմսերի, ֆիլմի պատճենների քանակի մասին տեղեկատվական համակարգի բացակայության պատճառով շուկան անկառավարելի է եւ չի նպաստում սպառողի շահերին: Կինոցուցադրման բնագավառում չի վերահսկվում նաեւ կինոթատրոնների տոմսային համակարգը:

Վերոնշյալ գործընթացներով պայմանավորված՝ առաջացել է տվյալների թվայնացման եւ ավտոմատացման անհրաժեշտություն, որի նպատակով առաջարկվում է ստեղծել միասնական տեղեկատվական համակարգ: Համակարգի ներդրման նպատակն է շուկայի պահանջարկի եւ տնտեսական արդյունավետության վերլուծությունը, ոլորտում շահագրգիռ կազմակերպությունների եւ սպառողների համար գործունեության թափանցիկության ապահովումը, բիզնես գործընթացների թվայնացումը, որը կնպաստի պետություն-մասնավոր փոխգործակցությանը: Համակարգի ներդրման նպատակն է նաեւ կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականության մշակման եւ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության ապահովումը, ազգային ֆիլմերի ցուցադրման արդյունքային ցուցանիշների հավաքագրումը եւ դրանց համար փոխշահավետ եւ բարենպաստ պայմանների ապահովումը: Համակարգը չի նախատեսում տոմսերի վաճառք. այն ունենալու է ծրագրային փոխկապակցվածություն կինոթատրոնների գործող տոմսային համակարգի հետ՝ API-ի միջոցով: Համակարգի կիրառումը պետք է լինի պարտադիր բոլոր տեսակի ցուցադրությունների համար՝ հիմնվելով վարձութային վկայականի տվյալների վրա: Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է մի շարք երկրների փորձը:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ

Սեւանա լճի մակարդակը 2024 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է մնում 22, իսկ 2024 թվականի հունվարի 3-ի համեմատ՝35 սանտիմետրով:

Ինչպես հայտնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, 2024 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 50 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրվա 1900 մետր 30 սանտիմետր եւ 2024 թվականի հունվարի 3-ին արձանագրված 1900 մետր 17 սանտիմետր նիշերի դիմաց:

2024 թվականի հունվարից մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 1-ը Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 178 միլիոն 866 հազար խորանարդ մետր ջուր: Ոռոգման նպատակով Հրազդանի հունով Սեւանա լճից հունիս-սեպտեմբերին բաց է թողնվել 131 միլիոն 38 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերում դիտվել է ջրի ելքերի փոփոխական ռեժիմ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 19 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը վերահսկողական միջոցառումներ է իրականացրել «Տոմատի մածուկ» անվանումով ապրանքների շրջանառության ոլորտում:

«ROYAL», «ARTFOOD», «ANTARI», «ՄԱՊ», «YAN», «NAYIRI FOOD», «Кухмасмер», «Արարատ Քենինգ ֆեքթորի», «Արարատի Սննդի Կոմբինատ», «PRIMO» անվանումներով տոմատի մածուկների առնչությամբ խախտումներ չեն հայտնաբերվել:

Միաժամանակ, վերահսկողական միջոցառումների արդյունքում հարուցվել է 12 վարույթ, որոնց արդյունքում 10 վարույթով պատասխանողների նկատմամբ պատասխանատվության միջոցներ են կիրառվել՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար, իսկ 2 վարույթ դեռևս գտնվում են քննության փուլում:

Վարույթներով արձանագրվել է, որ «Տոմատի մածուկ» անվանումով ապրանքները չեն համապատասխանել Տոմատային խտացրած մթերքների ընդհանուր տեխնիկական պայմանների միջպետական ստանդարտին (ԳՕՍՏ 3343-2017) եւ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին: Մասնավորապես, այդ ապրանքներում պակաս է եղել լուծված չոր նյութերի զանգվածային մասը եւ/կամ ավել է եղել քլորիդների զանգվածային մասը: Այդ ապրանքներն են՝

- «MAR FOOD»
-«Домашные секреты»
-«AS FOOD»
-«MAYRIK FOOD»
-«MG FOOD»
-«Эко Солт»
-«RAGMAK»
-«Сеньор помидор»
-«SHAPARAK»
-«VILFOOD»
-«Green Land»
-«Кубанские просторы»

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հոկտեմբերի 3-ին ընդունել է Հայաստանում Ղազախստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Բոլատ Իմանբաեւին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ նախարարի տեղակալներ Արման Խոջոյանն ու Նարեկ Հովակիմյանը: Քննարկվել են տնտեսության ոլորտում երկկողմ համագործակցության հեռանկարները, ներդրումային համագործակցության հնարավորությունները հատկապես պարենային անվտանգության եւ ագրովերամշակման ոլորտներում, ինչը կնպաստի մասնավոր ներդրումների ներգրավմանը եւ արտադրական կարողությունների զարգացմանը:

Թեմաների թվում էր նաեւ գործարար շրջանակների մասնակցությամբ B2B ձեւաչափով հանդիպումների կազմակերպումը՝ երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման եւ ագրոպարենային ապրանքների տեղաշարժի ու մատակարարման արդյունավետության բարձրացման նպատակով:

WCIT2024/DigiTec

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՏԱՐՎԱ ԱՄԵՆԱՄՊԱՍՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Մեկնարկում է տարվա ամենամպասված տեխնոլոգիական միջոցառումը՝ Նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը՝ WCIT2024/DigiTec-ը, որի շրջանակներում անց է կացվելու «Դիջիթեք էքսպո» «Մերիդիան» կենտրոնում (հոկտեմբերի 4-6), աննախադեպ բացման համերգային ծրագիր է ներկայացվելու Հանրապետության հրապարակում (հոկտեմբերի 4՝ այսօր), եւ շուրջ երեք օր Մարզահամերգային համալիրում անց են կացվելու Արհեստական բանականության եւ դրա կիրառության վերաբերյալ պանելային քննարկումներ ու ելույթներ միջազգային հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ (հոկտեմբերի 4-7):

Այսօր՝ հոկտեմբերի 4-ին, «Մերիդիան էքսպո» կենտրոնում կբացվի տարածաշրջանի ամենամեծ տեխնոլոգիական ցուցահանդեսը՝ «Դիջիթեք 2024»-ը, որն իր շուրջն է համախմբել հայկական եւ ոչ միայն առաջատար տեխնոլոգիական ընկերություններին, ստարտափներին:

«Ֆասթեքսի» եւ «Ֆասթբանկի» հետ համատեղ հոկտեմբերի 4-ին տեղի կունենա WCIT2024/DigiTec-ի մեկնարկային համերգային ծրագիրը Հանրապետության հրապարկում՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ, որին կհաջորդի ամերիկացի երգիչ, երգահան Ջեյսոն Դերուլոյի բացառիկ ելույթը:

WCIT2024/DigiTec-ը Հայաստանում կհյուրընկալի ավելի քան 2,000 միջազգային պատվիրակների եւ խոսնակների աշխարհի տարբեր երկրներից՝ Արվիդ Բելլ (Arvid Bell), Էշթեր Վուժիցկի (Eshter Wojcicki), Տակ Ln (Tak Lo), Ռոդրիգո Մեսսի (Rodrigo Messi), Իբրահիմ Գեդեոն (Ibrahim Gedeon), ուրիշներ:

Մասնավորապես, «REDDS Capita»-ի նախագահ Սթեֆըն Իբառակին (Stephen Ibaraki) կխոսի հզոր նորարարական ձեռքբերումների օգտագործմամբ խոստումնալից ապագա ստեղծելու մասին:

Աշխարհահռչակ Calvin Klein բրենդի հավաքածուների ռազմավարության տնօրեն Ֆրանչեսկա Բերտազզոն (Francesca Bertazzo) կներկայացնի մարքեթինգում եւ սոցիալական մեդիայում նոր լսարանի ներգրավման գործում ԱԲ-ի կիրառության մասին: Nvidia-ի փոխնախագահ Ռեւ Լեբարեդյանը կկիսվի ԱԲ-ի զարգացումների եւ կյանքի բոլոր ոլորտներում դրա ներթափանցման մասին իր տեսլականով: Համաժողովի հատուկ հյուրեր՝ Moderna կենսատեխնոլոգիական ընկերության համահիմնադիր Նուբար Աֆեյանը եւ միջազգայնորեն հայտնի Agenus ընկերության տնօրեն Գարո Արմենը, կխոսեն հեղափոխական բժշկության մեջ արհեստական բանականության (ԱԲ) կիրառության մասին: «Արմենկո կապիտալի» խորհրդի նախագահ Ալեքս Եմենդջյանը հանդես կգա տպավորիչ ելույթով՝ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու ռազմավարությունների վերաբերյալ: Այս եւ տասնյակ այլ համաշխարհային խոսնակների ելույթները մասնակիցներին բացառիկ հնարավորություն կընձեռեն համաշխարհային նորարարական եւ տեխնոլոգիական լավագույն արդի փորձի փոխանակման համար, ինչպես նաեւ մասնակիցը դառնալու առաջադեմ լուծումների բազմաբովանդակ հանդիպումների:

WCIT2024/DigiTec-ը անցկացման չորս օրերին՝ հոկտեմբերի 4-7-ը, Հայաստանը կվերածի տեխնոլոգիական մտքի կենտրոնի՝ հանդիսանալով հարթակ ոլորտի եւ թեմայի շուրջ առաջատար համաշխարհային խոսնակների ելույթների, պանելային քննարկումների եւ B2B հանդիպումների համար:

Համաժողովի շրջանակում կանցկացվի նաեւ WITSA World Cup (WWC) ստարտափների մրցույթը՝ շուրջ 20 երկրներից ընտրված ստարտափների շրջանում, կներկայացվեն նորարարական ցուցադրություններ, բիզնես ներկայացումներ, սեմինարներ եւ այլ միջոցառումներ: Մրցույթում Հայաստանը կներկայացնեն TextnՐayMe եւ AllClean ստարտափները: Հոկտեմբերի 7-ին կհայտարարվի նաեւ WITSA World Cup-ի հաղթող ստարտափի անունը:

Հայաստանը, հանդիսանալով տարածաշրջանի տեխնոլոգիական հաբ, վերջին տարիներին իր շուրջն է համախմբել գլոբալ մի շարք տեխնոլոգիական ընկերությունների, որոնք այստեղ հիմնել են իրենց գիտահետազոտական (R&D) գրասենյակներն ու մասնաճյուղերը:

Համաժողովի շնորհիվ մի շարք ընկերություններ կծանոթանան հնարավորություններին եւ ներուժին, որն առկա է ոլորտի առաջատար ընկերությունների գիտահետազոտական կենտրոններ հիմնելու համար:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԱՐԿ՝ Mastercard ՆՈՐ ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ

«Ամերիաբանկը» Mastercard վճարային համակարգի հետ համատեղ մեկնարկել է նոր արշավ: Մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ, դասվիրելով նոր Mastercard «Ամերիաբանկից» եւ կատարելով վճարումներ միջազգային օնլայն հարթակներում՝ հաճախորդները կստանան 1% հետվճար՝ առավելագույնն ամսական 10.000 դրամ: Օրինակ, հաճախորդները կարող են գնումներ կատարել Sephora.com, Shein.com, Taobao.com, Ikea.com, Amazon.com, Ipsy.com, Iherb.com, Pinduoduo.com եւ այլ միջազգային հարթակներից, կամ ձեռք բերել ինֆնաթիռի տոմսեր, ամրագրել հյուրանոց, վճարել բաժանորդագրություններ համար ու շատ ավելին:

Պատվիրելով նոր Mastercard «Ամերիաբանկից» եւ ակտիվացնելով այն՝ հաճախորդները նաեւ կմասնակցեն 48 հատ iPhone 16-երի խաղարկությանը. արշավի շրջանակում մինչեւ տարեվերջ յուրաքանչյուր ամիս՝ հոկտեմբերին, նոյեմբերին, դեկտեմբերին, խաղարկվելու է 16-ական iPhone 16:

Հավելենք, որ 2023թ.-ին «Ամերիաբանկի» Mastercard քարտերով իրականացված գործարքների ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 25.1%-ով: Իսկ «Ամերիաբանկի» Mastercard քարտապանների թվի աճը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 35.8%:

Այս տարվա առաջին 8 ամսվա տվյալներով միջազգային օնլայն հարթակներից գնումներ է կատարել «Ամերիաբանկի» Mastercard քարտապանների 43%-ը:

Նշենք, որ «Ամերիաբանկի» Mastercard հնարավոր է պատվիրել ինչպես օնլայն՝ հաշված որպեների ընթացքում, այնպես էլ «Ամերիաբանկի» մասնաճյուղում: Մանրամասները՝ հղումով:

«Ամերիաբանկի» մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ Բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆ 89

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԱՐՏԻՍՏԻ ՈՒՂԻՆ

Երեկ մեծանուն դերասան Արմեն Ջիգարխանյանի ծննդյան օրն էր: Նա կդառնար 89 տարեկան:



Ջիգարխանյանը ծնվել է 1935թ. հոկտեմբերի 3-ին Երեւանում: 1953թ. ավարտել է Երեւանի Չեխովի անվան դպրոցը: 1954թ. ընդունվել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ: 1953-54 թվականներին, որպես օպերատորի օգնական, աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում: 1955-67թթ. աշխատել է Երեւանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում՝ որպես դերասան: 1967թ. տեղափոխվել է Մոսկվայի Լենինյան կոմսոմոլի թատրոն: 1969-96թթ. խաղացել է Մոսկվայի Մայակովսկու անվան թատրոնում:

1975թ. «Եռանկյունի» ֆիլմի համար արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Դերակատարումներ է ունեցել բազմաթիվ ռուսական ֆիլմերում եւ կադրից այն կողմ մարմնավորել է «Սոյուզմուլտֆիլմ» ստուդիայի բազմաթիվ մուլտհերոսների: 1979թ. Վլադիմիր Վիսոցկու հետ խաղացել է «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» 5-սերիանոց ֆիլմում: 1981թ. նկարահանվել է ռուս-ֆրանսիական «Թեհրան 43» ֆիլմում: 1991-96թթ. դասավանդել է Մոսկվայի Գերասիմովի անվան համառուսական պետական կինեմատոգրաֆիայի համալսարանում:

Խաղացած ֆիլմերից են՝ «Բարեւ, ես եմ», «Տղամարդիկ», «Բարեւ ձեզ, ես ձեր մորաքույրն եմ», «Հարսնացուն հյուսիսից», «Երբ գալիս է սեպտեմբերը», «Արեւիկ», «Մխիթար սպարապետ», «Գիքոր», «Ալի Բաբան եւ 40 ավազակները», «Օտար խաղեր», «Ալֆոնս», «Մոսկովյան արձակուրդներ», «Ռեւիզորը», «Մարգո թագուհի», «Մեր բակը 2», «Խելագարություն», «Եռյակը» եւ այլն: 1977թ. արժանացել է ՀԽՍՀ, 1985թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանը:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կարգի շքանշանների: Գրանցված է համաշխարհային Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես ամենաշատ նկարահանված դերասան: Նկարահանվել է ավելի քան 250 կինո եւ հեռուստաֆիլմերում: 2010թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի, 2013թ.՝ հայկական «Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխության Հատուկ մրցանակի:

Արմեն Ջիգարխանյանը մահացել է 2020 թվականի նոյեմբերի 14-ին Մոսկվայում:

Համաշխարհային կինեմատոգրաֆիայի բնագավառում ռեկորդային թվով դերեր կերտած Արմեն Ջիգարխանյանն իրեն բազմիցս ներկայացրել է որպես զտարյուն հայ, որը քաջ գիտի եւ սիրում է իր ժողովրդի պատմությունն ու արվեստը՝ բարձր գնահատելով ազգային ինքնագիտակցության առկայությունը յուրաքանչյուր անձի խառնվածքում:

Փոքր տարիքից նրան դաստիարակել է խորթ հայրը, որը խոհեմ եւ խելացի անձ էր: Համաձայն կենսագիրների՝ մանկության տարիներից ի վեր Արմենը երազել է դերասան դառնալ, ինչի պատճառը, հավանաբար, թատերասեր մայրն էր, որն իր զավակի հետ ոչ մի ներկայացում բաց չէր թողնում: Ուստի, դպրոցն ավարտելուց հետո, Արմենը որոշում է կայացրել դերասանի մասնագիտությունն ընտրել. 1953 թվականին մեկնում է Մոսկվա՝ ԳԻՏԻՍ ընդունվելու նպատակով, սակայն ձախողվում է խիստ արտահայտված հայկական ակցենտի պատճառով:

Արմենը վրդովված վերադառնում է հայրենիք՝ սկսելով աշխատել Երեւանի կինոստուդիայում՝ որպես լուսավորող, միաժամանակ պատրաստվելով ընդունվել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտ: Նրան հաջողվում է, եւ նա շուտով հայտնվում է տաղանդաշատ Գուլակյանի խմբում: Աչքի ընկնելով իր ուրույն կերպարով, ձայնով ու բնատուր տաղանդով՝ Արմենը ստանձնում է գլխավոր դերերը ամենատարբեր ներկայացումներում: 1967 թվականին Ջիգարխանյանը Երեւանից հեռանում է Մոսկվա՝ նորանոր հաջողված դերեր խաղալով Էֆրոսի ղեկավարած ռուսական թատրոնում:

Բազմաշնորհ արվեստագետը հեղինակել է նաեւ հեռուստահաղորդումներ, ռադիոհաղորդումներ, ձայնավորել է սիրված մուլտֆիլմերի հերոսների: Ռուսաստանում նա ուներ սեփական թատրոն եւ նկարահանվում էր տեղական ֆիլմերում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԵՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ՄՇԿԻԹ

ՇՈՒՇԻՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԹԱՆԳԱՐԱՆ Է ԿԱՌՈՒՅՈՒՄ

Monument Watch-ը սիսգանգում է.

«Սույն թվականի սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, այցելելով Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Շուշի, ներկա է գտնվել «Դրոշի հրապարակի» բացմանը, որը կառուցվել է դեռեւս 2021 թվականին՝ Ադրբեջանի կողմից ոչնչացված Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշակոթողի վայրում: Համաձայն ադրբեջանական լրատվականների տարածած տեղեկատվության՝ «Դրոշի հրապարակի» մոտ կառուցվելու է նաեւ «հաղթանակի թանգարանը»՝ նվիրված 44-օրյա պատերազմում Ադրբեջանի տարած հաղթանակին: Նշենք, որ այստեղ է կառուցվում նաեւ Ադրբեջանի «հաղթանակը» մատնանշող Շուշիի նոր մզկիթը, որի հիմնարկեքը կատարվել էր դեռեւս 2021 թվականի մայիսին Ադրբեջանի նախագահի կողմից:

44-օրյա պատերազմից հետո ադրբեջանական կողմը Շուշիի քաղաքի գրավմանը տալիս է առանձնահատուկ տեղ՝ որպես «Ղարաբաղի ազատագրման համար պատերազմում տարած հաղթանակի խորհրդանիշ»: Ուստի Շուշի քաղաքի բարձրադիր կետում կառուցվելիք այս երեք համալիրներին տրվում է առանձնահատուկ նշանակություն: Այս երեք կառույցները՝ հատկապես մզկիթը եւ թանգարանը իրենց մեջ խորհրդանշում են հայկական Արցախի ոչնչացումը, հայության էթնիկ զտումները:

Մեր արձագանքը

Շուշիում ադրբեջանական թանգարանի, մզկիթի եւ հրապարակի կառուցումը Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքում՝ հայ ժողովրդի մշակութային իրավունքների կոպիտ խախտում է: Այն ոչ միայն ժառանգության ոչնչացման անպատժելիության հետեւանք է, այլեւ նոր ինքնության ստեղծում՝ հայկականի ժխտման ճանապարհով: «Ջինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի եւ 1999 թվականի երկրորդ արձանագրության 9-րդ հոդվածի գ կետի համաձայն՝ արգելվում է մշակութային արժեքի ցանկացած վերափոխումը, դրա օգտագործման ձեւի փոփոխությունը, որոնք նպատակ ունեն թաքցնելու կամ ոչնչացնելու մշակութային, պատմական կամ գիտական վկայությունները: Այս կոնտեքստում ակնհայտ է, որ Ադրբեջանը ոչնչացնելով, յուրացնելով մի ողջ հանրույթի մշակութային ժառանգությունը, զրկելով նրան իր սեփական ինքնությանը համարժեք ապրելու ու ստեղծագործելու իրավունքից, այժմ յուրացման գործողությունը ցանկանում է ամրագրել պետականորեն եւ միջազգայնորեն՝ խախտելով հայ հանրույթի մշակութային ֆունդամենտալ իրավունքները՝ սահմանված նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ հոդվածով եւ ՄԱԿ-ի 1966 թվականին ընդունված «Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների մասին Դաշնագրի» 15-րդ հոդվածով, որն ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ իր համայնքի մշակութային կյանքին անարգել մասնակցելու իրավունքը...»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԻԿԱ ԽԱՂԻՆ

Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի առաջին տուրում Երեւանի «Նոան» «Հանրապետական» մարզադաշտում կընդունի չեխական «Մլադա Բոլեսլավին»:

Այսօր կայացել է երեւանյան թիմի գլխավոր մարզիչ Ռուի Մոտայի նախախաղային ասուլիսը:

«Մթնոլորտն ավելի լավ լինել չէր կարող, քանի որ տղաները շատ ոգեւորված են եւ անհամբերությամբ են սպասում առաջիկա խաղին: Մենք քրտնաջան աշխատել ենք, լավ ենք պատրաստվել առաջիկա խաղին: Առավելագույնս մոտիվացված ենք:

Իհարկե, լավ ենք վերլուծել մրցակցին, քանի որ ամեն անգամ անում ենք մեր «տնային աշխատանքը»: Հիանալի գիտենք նրանց ուժեղ եւ թույլ կողմերը ու խաղին պատրաստվել ենք՝ հիմնվելով այդ ամենի վրա: Բայց նաեւ ուշադրություն ենք դարձրել մեր թիմին, այն ամենին, ինչը մեր թիմի դեպքում ամենալավն է ստացվում:

Ակնկալում ենք, որ վաղվա խաղում շատ մրցունակ խաղ ցույց կտանք: Այնպիսի թիմի դեմ, որը դարձյալ հարձակողական ֆուտբոլ է ցուցադրում, ակնկալում ենք, որ գրավիչ ու դրական ֆուտբոլ կխաղանք: Հուսով ենք՝ վաղը խաղում մրցակցից ավելի լավը կլինենք:

Մեր նպատակն ամեն խաղում հաղթանակի համար դաշտ դուրս գալն է, գրավիչ ֆուտբոլ ցուցադրելն ու այս մրցաշարում մեր հետքը թողնելը: Իհարկե, հուսով ենք՝ դա բավարար կլինի հաջորդ փուլ դուրս գալու համար:

Մեզ համար շատ լավ է: Ամեն անգամ, երբ խաղում ենք սեփական հարկի տակ, շատ ավելի մեծ վստահություն ենք ունենում, քանի որ խաղում ենք 12-րդ խաղացողի՝ մեր երկրպագուների հետ: Դա մեզ շատ է օգնում: Սեփական հարկի տակ խաղալու հնարավորությունը շատ դրական է մեզ համար», - ասել է Մոտան:

ՄԻՐԱՆՅԱՆԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ

Ռումինական «Ունիվերսիտատեա Կլուժի» հարձակվող Արթուր Միրանյանը հրավիրվել է Հայաստանի ազգային հավաքական, հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

Նշենք, որ Հայաստանի հավաքականը Ազգերի լիգայի խաղարկությունում ընդգրկված է C լիգայի C4 խմբում Ֆարերյան կղզիների, Հյուսիսային Մակեդոնիայի եւ Լատվիայի հավաքականների հետ:

Հոկտեմբերի 10-ին Հայաստանի հավաքականը արտագնա հանդիպում կանցկացնի Ֆարերյան կղզիների ընտրանու հետ, իսկ 3 օր անց տանը կմրցի Հյուսիսային Մակեդոնիայի հետ:

● Հոկտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կցուցադրվի «Սպիտակաձյունիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալ:

Աստղիկ Կիրակոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարանի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները եւ օտարերկրացիները՝ կենտրոնական մարմին: Հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացին եւ օտարերկրացին կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործերին նախընտրելի չափանիշներով երեխա ընտրելու համար: Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրել ցանկացող անձը հաշվառումից չի հանվում:

Այն դեպքերում, երբ երեխային որդեգրելու ցանկություն է հայտնել ՀՀ սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները, կամ երբ երեխայի ծնողների եւ որդեգրել ցանկացող անձի միջեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն, որդեգրման նպատակով երեխայի կենտրոնացված հաշվառումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում տվյալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը: Այդ դեպքերում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որդեգրել ցանկացող անձի կողմից տվյալ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում երեխան հանվում է հաշվառումից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. ՀՀ մշտական բնակության ժամանող անձի անձնական ավտոմեքենան առանց մախսատուրքի վճարման ՀՀ ներմուծելու համար ավտոմեքենայի համար ի՞նչ պահանջներ են սահմանվում:

Գեւորգ Հունանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ նրա լիազորած անձի կամ նրա հանձնարարությամբ եւ անունից հանդես եկող մաքսային ներկայացուցչի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ազգերի լիգայի առաջիկա հանդիպումներին ընդառաջ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը հրապարակել է հավաքական հրավիրված ֆուտբոլիստների ցուցակը. Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքական է հրավիրվել 24 ֆուտբոլիստ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
Լոռի	+ 6 + 10 +16 + 19
Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

Արարատ	+ 13 + 15 +19 + 22
Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
Երեւան	+11 + 14 + 15 + 19

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*